

ԱՐՈՒԵՍՏԻ ԷԶԵՐ

ՆՈՎԵԼԼԻ

Անսահիսի Գ. Թուով
խօսած էինք նո-
վելիի մասին և իր
խաղացած գերերուն
մէջէն նշանակած էինք
Շայլոփի դերն իրեւ
իր ամէնէն կատար-
եալ ստեղծագործու-
թիւնը : Այս թուով
կը հրատարակենք ի-
տալացի մեծ արտես-
տագէտին լուսանկարը
այդ դերին մէջ, Պատ-
կերը հրաշակերտ մէն
է ինքնին, Բամպրան-
տի Հրէաներուն նշա-
նառոր շարքին մէջ
մտնելու արժանի :
Նովելլի յաջողած է
իր գէմոքին տալ նոյն
ինքն դիմակը Հրէու-
թեան, հակասական
խառնուրդովը ան-
պատկան հեզնու-
թեան, յամառ հա-
ւատքի : Վիթխարի գծծութեան ու դիւային | իսկ էին հագուստները :



ՆՈՎԵԼԼԻ ՇԱՑԼՈՒ ԽԵՐԻՆ ՄԵՋ

խորամանկութեան :
Երեք տարի անդադար
ուսումնասիրելէ, ցե-
ղին բոլոր զանա-
զանութիւնները մօ-
տէն քննելէ ետքն է
որ նովելլի կազ-
մառորած է իր տի-
պարը : Այս Հը-
րէան սակայն, ընդ-
հանուր Հրէութիւնը
խացնելով համուերձ,
Վենետիկի Հրէան է
մասնաւորապէս,
կերպնէրուն ըրջանին
Հրէան, զոր նովելլի
կրցած է գրէթէ նոյ-
նութեամբ զանել Վե-
նետիկի այսօրուան
Հրէայ ծերունիներու
մէջ որոնք—ինչպէս
եւ Պոլսոյ ծեր Հրէա-
ները—անփոփոխ պա-
հան են էին հոգին,
էին դէմքը եւ նոյն

ՎԱՐԴ ԵՒ ՍՈՒԱԿ
ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ (*)

(Ծառ. 3)

Արդ, քիչ մը վաստահութեան ստանալով,
սոխակը սիսաւ ամէն ասուու իր գաղցրախուազ
եղանակովը Վարդարանը հնչեցնել . այսինքն
որ առնասարակ քաղաքացւոց մէջ շշունչ ինկաւ-
չէն գիտեր թէ ո՞վ է կամ որո՞ւն սիրահա-

թուած է, բայց ատիկա հոգ չէին ըներ, եւ
ձայնին քաղցրութեանը զմայլած՝ ախորժան-
քով ունկնդիր կ ըլլային :

Սակայն, ամենազեղեցիկ Անթառամ-ջարդը
Զեփիւրին պատմութենին հասկցաւ թէ Սիրա-
հար-Սոխակը եկած է . բայց չգիտնալ
ձեւայնելով, սուրհանդակը կանչեց եւ ըսաւ՝
«այ ի՞նչ գրդովմունքէ որ քաղաքը ինչեր է,
եւ ո՞վ է ան որ այսքան համարձակութեամբ
Վարդարանը կը հնչեցնէ . միթէ անքնակ կը
կարծէ այս սիդը . շոտով հնա՞ փնտէ գտիր
զանի եւ հակցիր թէ ո՞վ է, որո՞ւն սիրոյն

(*) Տես Անսահիս, թիւ 1.